



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵԼՈՒՅԹԸ ԵՐԵՎԱՆԻ
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ
(11 հունիսի 1990 թ.)

Սրտի գոհունակությամբ ես բերում եմ ձեզ բոլորիդ Աստուծո օրհնությունը Ամենայն Հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնից և իմ ուրախությունն եմ ուզում հայտնել և հոգեկան մխիթարությունը, որ հեռուստացույցի հարգարժան ղեկավարությունը որոշել է հետ այսու պարբերաբար հաղորդումներ հատկացնել՝ նվիրված Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուն, մեր ազգային Մայր Եկեղեցուն, նրա պատմությանը, նրա հոգևոր-բարոյական ուսմունքին, նրա մատենագրությանը և նաև Հայաստանյայց Եկեղեցվո կատարած դերին հայ ժողովրդի հայրենասիրական և ազատագրական պայքարի ճանապարհին մեր ողջ պատմության ընթացքում: Մենք կարող ենք ասել, Հայաստանյայց Եկեղեցվո հիմնադրության առաջին, հնագույն շրջաններից՝ 5-րդ դարից, Վարդանանց պատերազմից սկսյալ, հետագա դարերին մույնպես՝ Հայ Եկեղեցին մույն հայրենասիրական, ազատասիրական դիրքերի վրա է գտնված, նեցուկ հայ պետականության, երբ հայկական պետականություն ունեցել ենք, իսկ այն շրջաններին, երբ զրկված ենք եղել պետականությունից, Հայ Եկեղեցին գրեթե ինքն իր ուսերի վրա է վերցրել հայ ժողովրդի ազատագրական շարժումների մույնիսկ ղեկավարությունը հաճախ:

Այս բոլորը, իմ կարծիքով, բավարար չափով ծանոթ չեն մեր հայրենի ժողովրդին, մանավանդ, որ վերջին 60—70 տարիների ընթացքում այս ճշմարտությունները անտեսված էին կամ մոռացության ենթարկված:

Այժմ կարծում եմ, ժամանակն է արդեն, որ հայ ժողովուրդը ինքը զինքը ճանաչի նաև Հայ Եկեղեցու կյանքի և նրա կատարած դերի, պատմական մակարդակի վրա: Այս ձևով մեր հայրենի ժողովուրդը առավել ամբողջական կերպով պիտի ճանաչի ինքն իրեն: Մանավանդ այս օրերին, երբ հայ ժողովուրդը ձգտում է իր ազգային ինքնությունը ճանաչել ամբողջական կերպով: Այս առումով ես ողջունում եմ հեռուստացույցի ղեկավարության որոշումը՝ հաղորդաշար կազմակերպելու պարբերաբար, նվիրված Հայաստանյայց Եկեղեցուն: Եվ այսօր ես ուրախ եմ, որ բացումն եմ կա-

տարում այս հաղորդաշարի: Յանկանում եմ առաջին հերթին այս պահին ողջունել այն կարևոր իրադարձությունը, որ տեղի ունեցավ մեր մայրաքաղաքում անցյալ ամիս, մարտի 31-ին, երբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հատուկ աղոթքներով օրհնեց հուշաքարը և հողը՝ Երևանի կենտրոնում հատկացված վայրում, որտեղ մոտ ապագային պիտի կառուցվի Երևանի նոր տաճարը, նոր Մայր տաճարը, նվիրված Հայաստանում քրիստոնեության պետական կրոնք հռչակման 1700-ամյակին: Մենք ծրագրել ենք, Գերագույն Հոգևոր Խորհուրդի որոշումով, որ այդ հուշարձան եկեղեցին, որ պետք է կառուցվի, պատրաստ լինի մինչև 2000 թվական: Մրցություն պիտի հայտարարվի մամուլում որպեսզի մասնակցեն թե հայրենի, և թե արտասահմանի հայ ճարտարապետներ, ներկայացնելով նախագծեր մեկ ու կես տարվա ընթացքում, և հետո ընտրություն կատարվի՝ լավագույն նախագիծը իրականացնելու համար մինչև 2000 թվականը: Մեր առաջադրանքն է, որ Երևանի Մայր տաճարը կառուցվի հայկական ճարտարապետության դասական ոճով, բայց արդիական խոսք ավելցնելով նրա վրա: Այսինքն, մի համադրում հայ դասական ճարտարապետության և արդիականության, որպեսզի նորակառույց տաճարը ոչ թե լինի մեկ պատճենը մեր պատմական միջնադարյան եկեղեցիների, այլ այդ նույն ոճի սահմանի մեջ ասվի նաև նոր խոսք, արդիական խոսք: Ես կարծում եմ, որ այս համադրությունը երջանիկ կերպով կկարողանան կատարել մեր ճարտարապետները իրենց ներշնչանքով, իրենց մասնագիտական տաղանդով:

301 թվականին, ողջ պատմական Հայաստանում քրիստոնեությունը հռչակվեց ազգային պետական կրոն, Տրդատ թագավորի օրոք, Ս. Գրիգոր Լուսավորչի օրհնությամբ և նրա գործունեությամբ: Պետք է ասել, որ քրիստոնեությունը տարածված էր արդեն Հայաստանի երկրամասի վրա հենց առաջին դարուց սկսյալ: Նույնիսկ հնագույն պատմական վկայություններ կան, որ Հայաստանում, Քրիստոսի Ավետարանի առաջին քարոզիչներից եղել են Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալները, առաջին դարի երկրորդ կեսից, մոտավորապես: Դրա համար մեր Եկեղեցին կոչվում է Առաքելական Եկեղեցի, այսինքն մի Եկեղեցի, որ հաստատված է բուն իսկ Քրիստոսի աշակերտների քարոզության հիմքերի վրա: Մենք, քրիստոնեությունը չենք ընդունած ուրիշ ժողովուրդներից, այլ ուղղակի բուն աղբյուրից՝ Քրիստոսից և նրա անմիջական աշակերտներից: Այս ձևով հայ ժողովուրդը աշխարհում առաջին քրիստոնյա վավերական ժողովուրդներից մեկն է հանդիսանում: Եվ սա մեր պարծանքն է: Ուրեմն, քրիստոնեությունը քարոզվում էր առաջին, երկրորդ, երրորդ դարերի ընթացքում, բայց դա ընդհանրացած կրոնքը չէր, պաշտոնականը չէր, այլ փոքրիկ համայնքներ էին կազմվում այստեղ-այնտեղ, երբեմն էլ հալածված: Մանավանդ երրորդ դարի վերջերում, երբ Հայաստանը բարեկամական հարաբերությունների մեջ էր Հռոմեական կայսրության հետ և այդ շրջանին Հռոմեական կայսրության ամբողջ տարածքի վրա հալածվում էր քրիստոնեությունը, ամեն անգամ այս նույն քաղաքականությունը վարվում էր նաև Հայաստանում, հատկապես, ինչպես ասացի, 3-րդ դարի վերջերում, Դիոկետիանոս հռոմեական կայսրի օրոք: Այդ շրջանին է, որ տեղի ունեցավ նահատակությունը Հռիփսիմյանց և Գայանյաց կույսերի, որոնք նահատակվեցին հենց մոտավորապես այն տեղում, որտեղ կառուցված են հետագայում նրանց անուններով նշանավոր մեր վանքերը՝ Ս. Հռիփսիմեն, Ս. Գայանեն, որ այսօր էլ կանգուն են: Յոթերորդ դարու պատմական մեր հուշարձաններից են: Հա-

լածանքների շրջանը տևեց մինչև չորրորդ դարի սկիզբը: Հենց Տրդատ թագավորի օրոք, սակայն Ս. Գրիգոր Լուսավորչի չարչարանքների և քարոզության հետևանքով, և պատմական հատուկ իրադարձությունների բերումով, Տրդատ թագավորը հրաժարվեց հեթանոսական կրոնքից և որդեգրեց այն կրոնը, որ ինքը հավանում էր մինչև այդ, այսինքն քրիստոնեությունը:

Ահավասիկ, 301 թվականին Տրդատ թագավորը իր ամբողջ թագավորական ընտանիքով, իշխաններով մկրտվեցին, ժողովուրդը մկրտվեց, և այդպիսով սկիզբ առավ հայ ժողովրդի պատմության քրիստոնեական շրջանը, հիմնվեց Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, կառուցվեց առաջին Մայր տաճարը, այսօրվա մեր ծանոթ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, որը կառուցված է 303 թ.: Այսպես է, որ վերջնականապես քրիստոնեությունը դարձավ Հայաստանի, հայ ժողովրդի պետական-ազգային կրոն, որը զարգացավ հետզհետե և հայ ժողովրդի ոգին շաղախվեց, բեղմնավորվեց Քրիստոսի Ավետարանի լույսով, և դրա արդյունքը եղավ 5-րդ դարու սկիզբներին հայ ժողովրդի նաև մշակութային, ազգային վերածնունդը, Ս. Մեսրոպ Մաշտոցի հանձնարի փայլատակումով: 5-րդ դարու այդ մշակութային ծաղկումը, զարգացումը, ինչպես գիտեք, մենք կոչում ենք Ոսկեդար:

Ոսկեդարը կազմավորվեց և ճառագայթել սկսավ շնորհիվ հայ ժողովրդի քրիստոնեական հավատքի, հիմքը դրվեց հայ դպրության և գրականության, Ս. Մեսրոպ հմարեց հայերեն լեզվի տառերը, ձևավորվեց վերջնականապես հայ գրաբար լեզուն, այդ սքանչելի լեզուն, որով մենք հիմա հպարտանում ենք, թարգմանվեց Ս. Գիրքը հայերեն լեզվով, և նույն շրջանին սկիզբ առին նաև հայ ճարտարապետությունը, հայկական երաժշտությունը և հայ մանրանկարչությունը, որոնք դարերի ընթացքում զարգացան, և որոնք նույնպես մեր ազգի հպարտանքն են հանդիսանում մեր օրերին:

Այս բոլորը, ամբողջ հայ ժողովրդի հոգևոր, ազգային ոգեկանության ծնունդը կատարվեց Քրիստոսի Ավետարանի լույսով: Հայ ժողովուրդը դարձավ իսկական վավերական քրիստոնյա ժողովուրդ, հռչակված ամբողջ աշխարհի մեջ հնագույն շրջաններից մինչև մեր օրերը: Այսօր, որ խոսվում է հայ ժողովրդի ազգային արմատների մասին, պետք է ընդգծել հատուկ կարևորությամբ, որ հայոց ազգային ոգեկանության, ազգային մշակութային հիմքերը գտնվում են Ս. Էջմիածնում, մեր Առաքելական Մայր Եկեղեցում, և Երևանի Մատենադարանում:

Ավելին կասեի ես. 5-րդ դարում ոչ միայն հայ լեզուն կազմավորվեց վերջնականապես՝ գիր, գրականություն, դպրություն, ճարտարապետություն ստեղծելով, այլ նաև այդ դարում ձևավորվեց վերջնականապես հայ ժողովրդի ազգային ոճը: Մի ժողովուրդ՝ վավերականորեն հոգևոր և ոգեկան իմաստով և մշակութային իմաստով ազգային դիմագիծ ունեցող ժողովուրդ է, եթե կարողանում է ստեղծել իր սեփական ոճը, իր ինքնուրույն ոճը: Եվ 5-րդ դարում ճիշտ կլիներ ասել, որ վերջնականապես կազմավորվեց, ձևավորվեց և ծնունդ առավ այն, ինչ որ մենք այսօր էլ կարող ենք նկատել ազգային ոճ, որ անսահմանորեն բազմազան ձևերով արտահայտվում է թե մեր հոգևոր կյանքի մեջ, մեր Եկեղեցու կյանքի մեջ, թե մեր ժողովրդի բարոյական ըմբռնումների մեջ, թե մեր ճարտարապետության, մանրանկարչության, երաժշտության և այլն, բոլոր արվեստների մեջ: Մեր ժողովուրդը 5-րդ դարից սկսյալ դարձավ ինքնուրույն ոճ ունեցող, ինքնուրույն ազգա-

յին ռզեկանությունն ունեցող ժողովուրդը և այս ձևով ճանաչվեց աշխարհի վրա: Կուզեի ավելացնել, մի կարևոր հանգամանք է, որ հայոց քրիստոնեությունը ոչ միայն կարևոր իրադարձություն է մեզ՝ հայերիս համար, այլ նաև համաշխարհային երևույթ է երեք իմաստով.

Առաջին, որ համաշխարհային պատմության հորիզոնի վրա հայերը առաջին ժողովուրդն են, որ քրիստոնեությունը հռչակած են ազգային պետական կրոն: Քրիստոնեությունը ընդունած էին նաև ուրիշ ժողովուրդներ, բայց իբրև ոչ պետական ազգային կրոն: Առաջինը հայ ժողովուրդը եղավ, որ քրիստոնեությունը ընդունեց ազգային պետական կրոն 301 թ.: Հոռմեական կայսրության մեջ տասը տարի հետո հռչակվեց քրիստոնեությունը ազատ կրոն Կոնստանդին կայսեր օրոք, բայց կայսրը ինքը չմկրտվեց, պետական կրոնը չհռչակեց, այլ ինքն էլ մի տասը տարի հետո մկրտվեց, որով սա մի բացառիկ համաշխարհային երևույթ է և հպարտանք մեր ազգի համար, որ առաջինն հանդիսացան քրիստոնեությունը հռչակել ազգային կրոն:

Երկրորդ. 5-րդ դարում Ս. Գիրքը թարգմանվեց գրաբար հայերեն լեզվով, որ գիտական աշխարհում, լեզվագիտական աշխարհում մի մշակութային հուշարձան է հայերեն թարգմանությունը Թագուհի թարգմանության է նկատված արևմտյան մասնագետների կողմից անցյալ դարի վերջերին: Սա մի երևույթ է: Ուրեմն, հայ ժողովուրդը, քրիստոնեությունը ընդունելով, 5-րդ դարում, իր նսկեղարում ստեղծեց մի նոր Սուրբ Գրական լեզու հունարենի, լատիներենի կողքին, և ստեղծեց մի նոր մշակույթ՝ ազգային մշակույթ, ինքնուրույն մշակույթ, ոչ թե նմանությամբ ուրիշների, այլ ինքնուրույն մշակույթ:

Եվ երրորդ պարագան՝ որ նույնպես պատիվ է բերում մեր ազգին, այն, որ նույն 5-րդ դարում, 451 թ., երբ Պարսկաստանը, հեթանոս կրակապաշտ Պարսկաստանը հարձակվեց Հայաստանի վրա, վերացնելու համար քրիստոնեությունը, հայ ժողովուրդը ոտքի կանգնեց և ասաց՝ ոչ, և տեղի ունեցավ Վարդանանց պատերազմը: Վարդանանց պատերազմը կրոնքի, քրիստոնեության և հայրենիքի համար մղված պատերազմ էր: Եվ համաշխարհային պատմության հորիզոնի վրա սա էլ հանդիսանում է առաջին պատերազմը խղճի ազատության համար: Ահավասիկ, այս երեք կարևոր իրադարձությունը հատկանշում են, արժևորում են մեր ժողովրդի հոգևոր ազգային կյանքը և մեր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին: Այսօր, որ խոսվում է մարդու իրավունքների, խղճի ազատության մասին, այժմեական է նաև այս տեսակետից Վարդանանց պատերազմի սուրբ հիշատակը:

Սիրելիներ, աշխարհը մեզ ճանաչում է իբրև քրիստոնյա ժողովուրդ, աշխարհը մեզ գնահատում է, արժևորում և փառավորում իբրև քրիստոնյա ժողովուրդ, իբրև քրիստոնյա հավատք, քրիստոնեական արժեքներ ստեղծող և կրող ժողովուրդ դարերի ընթացքին, ավելի քան 1700 տարիներ: Ահա թե ինչու մենք պարտավոր ենք, կարծում են, ճանաչել զմեզ նաև հոգևոր մակարդակի վրա, կրոնական, քրիստոնեական կրոնքի իրագործումների մակարդակի վրա, Հայաստանյայց Եկեղեցվո առաքելության մակարդակի վրա: Առանց Հայաստանյայց Եկեղեցվո ճանաչումի թերի կլինեի ճանաչումը հայ ժողովրդի պատմության, հայ ժողովրդի մշակույթի և նրա արժեքների: Հետևաբար, ժամանակն է, որ այս ճանաչումը հետզհետե լայն ճանապարհ ունենա, խորացվի և մեր ժողովուրդը՝ Հայրենիքում և Սփյուռքում, առավել կարողանա հասնել գիտակցության այն բարձունքին,

ողեկանության այն բարձունքներին, ուր գտնվել են մեր մախահայրերը 5-րդ դարուց, Ոսկեդարուց սկսյալ, մանավանդ:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին մեր ազգային պատմությունն է, մեր հպարտանքն է, մեր պարծանքն է և պիտի ասեմ մեզ՝ մեր ապագան է: Մեր ժողովուրդը լավ պետք է հասկանա և ճանաչի մեր Եկեղեցուն և զոհ չգնա այլևայլ աղանդների և մեր հոգուն անհարազատ կրոնական շարժումներին, որոնք ոչ մի առնչություն չունեն մեր ազգի պատմության հետ, մեր մշակույթի հետ, մեր ազատագրական շարժման պայքարների հետ, ոչ մի առնչություն չունեն մեր ներկայի և ապագայի հետ: Մենք մեկ ազգություն ենք, մեկ և անբաժան, մեկ և անբաժան իբրև Եկեղեցի, մեկ կրոնական, քրիստոնեական հավատքով, մեկ Առաքելական Ս. Եկեղեցիով, մեկ ազգային մշակույթով, մեկ Մայր Հայրենիքով: Ահա մեր հավատամքը: Ես կոչ եմ անում բոլորիդ, որպեսզի այս ոգով մոտենաք Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուն: Եվ իմ միտքը ավելի առաջ է գնում, այս օրերին, երբ մեր ժողովրդի հոգին փոթորկված է իր ազգային ինքնությունը ձևավորելու, պայծառացնելու ճանապարհով և իր արդար իղձերը իրականացնելու թռիչքով, ես հավատում եմ, որ Հայաստանյայց Եկեղեցին և քրիստոնեական հավատքը կարող են իրենց նպաստը բերել, որպեսզի մոտ ապագային, այդ փոթորկումների իբրև հետևանք, հայ ժողովուրդը կարողանա հասնել՝ ստեղծելու նոր մի Ոսկեդար, նոր մի Ոսկեդար՝ հոգևոր-մշակութային իմաստով: Մեր ժողովուրդը այս ընդունակությունը ունի, այդ համարը ունի և ես մախատեսում եմ արշալույսը, զարթոնքը այդ Ոսկեդարի, իբրև պատասխան Ե-րդ դարու, մեր օրերի նոր հուշարձան: Այս մաղթանքով և այս աղերսանքով է, որ ես կուգեմաչի վերջացնել իմ այս խոհերը, կրկին բերելով ձեզի բոլորիդ Աստուծո օրհնությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնից:

Ողջ լերուք, գորացյալ Ս. Հոգով և հավետ օրհնյալ ի Տյառնե և ի մենջ, ամեն:

